ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՅՈԴԻ ՍՂՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով յոդի սղության վիճակների կանխարգելման հարցում համագործակցության կարեւորությունը,

ելնելով յոդացված աղի եւ յոդացված սննդամթերքի որակի եւ անվտանգության, դրանց արտադրության, պահպանման, փոխադրման եւ իրացման նկատմամբ ազգային պետական հսկողության փոխկապակցված եւ փոխընդունելի համակարգի շրջանակներում աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից,

նշելով Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում բնակչության շրջանում զանգվածային լրատվության միջոցներով յոդի սղության վիճակների կանխարգելման հիմունքների վերաբերյալ ակտիվ քարոզչության իրականացման անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերն իրականացնում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների բնակչության շրջանում յոդի սղության վիճակների կանխարգելման համաձայնեցված քաղաքականություն:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, յոդացված մթերքներում յոդի պարունակության հսկողության միասնական մեթոդներ մշակելիս, ինչպես նաեւ յոդի որոշման սարքավորումներ եւ սարքեր ստեղծելիս, ապահովում են պետական սանիտարահամաճարակային հսկողության մարմինների կողմից ներկայացվող պահանջների ներդաշնակությունն ու միասնությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերն իրականացնում են համաձայնեցված կազմակերպչական, կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված բնակչության շրջանում յոդի սղության վիճակների նվազեցմանը:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը մշակում եւ ընդունում են յոդացված աղի ու յոդացված մթերքի, յոդ պարունակող պատրաստուկների արտադրությունը, գնումները, իրացումը, դրանց որակի ու անվտանգության հսկողությունը եւ յոդի սղությամբ պայմանավորված հիվանդությունների նվազեցման այլ եղանակները կարգավորող փոխհամաձայնեցված որոշումներ:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը փոխանակում են յոդի սղության վիճակների կանխարգելման հարցերի վերաբերյալ նորմատիվ-իրավական փաստաթղթերը, յոդացված աղում եւ յոդացված մթերքում յոդի պարունակության վերաբերյալ գործող ազգային նորմատիվները, ինչպես նաեւ յոդացված մթերքի նոր տեսակների, դրանցում յոդի պարունակության

նորմատիվների եւ հսկողության միասնական մեթոդների մշակման փորձը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերն իրականացնում են յոդի սղությամբ պայմանավորված հիվանդությունների մոնիթորինգի համակարգի մշակում եւ ներդրում:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը մշակում եւ համաձայնեցնում են յոդացված աղի օգտագործման հանձնարարականներ, ինչպես նաեւ յոդացված մթերք օգտագործելիս սնուցման հանձնարարականներ:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը յոդացված աղի եւ յոդացված սննդամթերքի ներկրման նկատմամբ պետական սանիտարահամաճարակային մարմինների կողմից հսկողություն իրականացնելիս ելնում են Կողմերի պետությունների տարածքներում գործող սանիտարական կանոնների ու նորմերի գերակայությունից:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերը սահմանում են, որ ներկրվող յոդացված մթերքի մատակարարման եւ իրացման համար պարտադիր պայման է դրանց որակը եւ անվտանգությունը հավաստող արտահանող երկրի ուղեկցող փաստաթղթերի՝ արտադրողի (մատակարարողի) եւ մատակարարող երկրի պաշտոնապես լիազորված մարմինների սերտիֆիկատների եւ/կամ
սպեցիֆիկացիաների առկայությունը:

ՀՈԴՎԱԾ 10

Ներկրող երկրի ազգային պահանջներին չհամապատասխանող ներկրվող (արտահանվող)
յոդացված աղի եւ յոդացված սննդամթերքի հայտնաբերման դեպքերում, Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ դրանց հետագա իրացումը կանխարգելելու համար:
Կողմերի պետական սանիտարահամաճարակային հսկողության մարմինները պետք է օպերատիվ կարգով միմյանց տեղեկացնեն արտադրանքի խոտանման փաստերի մասին եւ
կատարեն անորակ արտադրանքի թողարկման պատճառների հետաքննություն:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը բաց է միանալու համար իրենց մասնակցությունում շահագրգիռ եւ սույն Համաձայնագրից բխող պարտավորությունները ստանձնելու պատրաստ այլ պետությունների համար՝ ավանդապահին միանալու վերաբերյալ փաստաթղթի
փոխանցման միջոցով:
Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից տվյալ ծանուցագիրը ստանալու օրից:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ՝ ձեւակերպված առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում:

Այդ ժամկետը լրանալուց հետո Համաձայնագիրն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, իսկ այն Կողմերի համար, որոնց օրենսդրությունը պահանջում է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգի կատարում՝ համապատասխան
փաստաթղթերը ավանդապահին հանձնելու օրվանից:

Նման ընթացակարգերի կատարման անհրաժեշտության մասին Կողմերը տեղեկացնում
են ավանդապահին սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից 3 ամսվա ընթացքում:

Կատարված է Մինսկ քաղաքում 2001 թվականի մայիսի 31-ին մեկ բնօրինակից՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մարտի 21-ից: